Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2024թ. սեպտեմբերի 9-ից 14-ը Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից կազմակերպված Ռադիոլոգիական և միջուկային հայտնաբերման մասին իրազեկման թեմայով աշխատաժողովին մասնակցելու նպատակով Լառնակա (Կիպրոսի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

1) Նարեկ Մանուչարյան, ՊՍՑԱԿՄՍՀՎ մաքսային հսկողության տեխնիկական միջոցների մոնիտորինգի բաժնի գլխավոր մաքսային տեսուչ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Կիպրոսի Հանրապետություն, ք.Լառնակա 2024թ. սեպտեմբերի 9-ից 14-ը:

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն(WCO)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել Ռադիոլոգիական և միջուկային նյութերի հայտնաբերման մասին իրազեկման թեմայով աշխատաժողովին: Աշխատաժողովը միտված էր ներկայացնել և իրազեկել ճառագայթային և միջուկային նյութերից բխող սպառնալիքների և դրանց չեզոքացման հիմնախնդիրների մասին:

Հանդիպման աշխատանքային լեզուն անգլերենն էր:

5. Քննարկված թեմաները՝

Աշխատաժողովի շրջանակներում պետությունների ներկայացուցիչները նեկայացրել են իրենց երկրներում ռադիոլոգիական և միջուկային նյութերի հսկողության գործող համակարգերը, դրանց արդիականացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ելույթներ ունեցան Սերբիայի, Վրաստանի, Մոլդովայի, Կիպրոսի, Ռումինիայի, ներկայացուցիչները: Դասընթացի ընթացքում իրենց աշխատանքային փորձով կիսվեցին Հայաստանի և Կիպրոսի ներկայացուցիչները:

Ելույթները հետաքրքիր էին և ներկայացնում էին երկրներում առկա խնդիրներն ու դրանց լուծումների փորձը: Աշխատաժողովի թեմաները ներկայացվեցին չորս օրերի ընթացքում՝ յուրաքանչյուր օրվա ավարտին հարց և պատասխանների միջոցով ամփոփելով տվյալ ելույթները, ինչպես նաև իրականացվեցին գործնական վարժանքներ՝ ընդգրկելով ռադիոլոգիական և միջուկային նյութերի սահմանահատման բնականին մոտ սցենարներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացի ընթացքում քննարկվել և մասնակիցների կողմից հավանության է արժանացել ռադիոլոգիական և միջուկային նյութերի գրադարանների ստեղծման կարևորությունը:

Մասնակիցները արժանացել են հավաստագրերի:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Աշխատաժողովի ընթացքում առաջարկվեց առաջիկայում կազմակերպել նոր աշխատաժողովներ, նրանցում ընդգրկել նաև մասնակից երկրների սեփական փորձերի նկարագրությունները:

Այլ երկրների հետ փորձի փոխանակումը կնպաստի մասնագիտական հմտությունների բարձրացմանը: Ստացված փորձը և գիտելիքները կփոխանցվեն աշխատանքային ընկերներին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

18 սեպտեմբեր 2024թ. Նարեկ Մանուչարյան